

Սիպթայի կաղնէաստանը յարգ ունեցաւ: 1210ին Ռարբի Սամուէլ Պար Սամսոն՝ Բամէթի այցելութենէն յետոյ հասաւ Մաւթրեի անտառները. «Մենք հոն տեսանք, կ'ըսէ, Աբրահամու բնակարանը ուր էր իր վրանը և այն ծառը որուն տակ երեք հրեշտակները կերակրեց»: Ծառին քով հաստատած էին քանի մը շէնքեր տարտամօրէն յիշելու համար Աբրահամու վրանը: Այդ տեղերուն վիճակը այնպէս էր՝ երբ 1283ին Burchard Քեբրոն եկաւ: Իր ծանօթագրութիւնները նախընթաց վկայութիւններու մասին թանկագին վաւերագիր մըն են: Իրմէ յետոյ, կը փոխակերպէ այս սրբափայլը հազիւ երկհարիւրամեայ, կամ հազիւ իր յիշատակը սկսած, Մամբրէն կ'ըլլայ Մորիա:

Էլ-Արպաինի բեւեկին. — 1533ին Greffin Affagartին ցոյց տրուեցաւ այն ծառը «որուն տակ կը բնակէր Աբրահամ, երբ տեսաւ երեք հրեշտակներուն անցնիլը» Էլ-Արպաինի բլուրին ստորոտը որ կը նայի դէպի արեւմուտք Քեբրոնի վրայ: «Այս լեռան մէջ կը գտնուէր քարայր մը՝ ուր կային երկու քարէ անկողիններ և աղբիւր մը, հոս էր այն տեղը ուր Ադամ և Եւա հարիւր տարի լացին Աբելի մահէն յետոյ, զիտնալով որ իրենց մեղքը յառաջ բերած էր մահը»(*):

(*) Յովհաննէս եպս. Երուսաղէմացին կը գրէ. «Աս (Քերոն) յուխատեաց ոչ ոք կարէ գալ յուխս եւ է հեռի յերուսաղիմէ Լ. մղոմ: Եւ ասի իբր երկու ժամ, զսանես կարմրանող արս մի՛ որ ասի Զոր Վայոյ: Եւ ասի ի գիւս Դաղմասացոց թէ, աս անկան Ադամ եւ Եւա՝ արտաբեալ ի դրախտէն եւ լացին ապաշխարութեամբ» (Հան. էջ 293):

Վերոյիշեալ կարծիքը ունեցած են նաեւ մեր հայ վարդապետներէն ոմանք, ինչպէս Շաբկանին մէջ կ'երգուի. «Ի սուրգանքն